Lmq
1107

394 - 13/III 78

648

891.99
Փ-24
Ա
C48.
6 NOV 2011

ՓԱՌՆԱԿԷՍ

ՆԻՍԻԱ

ՎՕԳԵՎԻԼ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Լ.Ս.ԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱՇԽԱՐՀ. ԳՐԱԴԱՐԱՆ.
Ա.ԲԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՄ.
Դ010
(4/351)

ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ ԷՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ
1900

ԲԲ.1Ե3
Ի-Դ

28.08.2013

Ру.

Дозволено Цензурою Тифлисъ, 20 Апрѣля 1900 г.

Настоящая піеса, подъ загл. „**Въ кредитъ**“ разрѣшена Г. И. об. Главноначальствующаго для представленія на сценахъ края. Мая 10 дня 1900 г. гор. Тифлисъ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԵՂԻՇԷ ԳԷՈՐԳԵԱՆ դերասան. . .	40 տար.
ՊԱՏՐԻԿ ՄԻՀՐԴԱՏԵԱՆ դերասան. .	30 „
ՆՈՐԱՑՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ տաճկահայ դերասան.	25 „
ԳԱԼՈՒՍՏ, Եղիշէի ծառան . . .	20 „

Անցքը պատահում է N քաղաքում 18...թ.

1107-2014
№ 1104

ՆԻՍԻԱ

Եղիշէի տունը: Սենեակի աջ ու ձախ կողմերից և մէջտեղից դռներ: Մէջտեղի դրան աջ ու ձախ կողմերից պատի վերայ կախուած են զանազան գոյնի աֆիշաներ: Բեմի աջ կողմում Եղիշէի դրասեղանն է դրած. վրան խառն ի խուռն թափուած են գրքեր ու թղթեր, երկու մոմակալ, թանաքաման, մի քանի շրջանակներ դերասանների բեմական հագուստներով նկարուած պատկերներով, մի ղամբար, մկրատ, մատիտ, դանակ, թուղթկտրիչ, մոխրաման և այլն:

ՏԵՍԻԼ Ա.

ԳԱԼՈՒՍՏ

(Նէրս է գալիս ձէջին դռնից ձի պրոկ ձեռ ուֆուր նամակներ յեռէն). Էսօր ինչ խաբարա տո՞... զահլէս տարան էլի... Էսքան էլ նամակ կըլնի

(Մօտենա՜մ է սեղանին և նամակները հաւաքելով դնում է սեղանի վերայ), էս մէկ, էս երկու, իրեք, չորս, հինգ, վեց, էս օխտը, ութը, ինները, տասը... (հաւաքելը ընդհատում է) օվվվվ... էլ համբերելու գլուխ չունիմ, թող ինքը գայ՝ ինչ ուզում ա՝ անի. (նախատենեակից ղանգի յայն է լսում), հըը... ո՞վա... խաթաբալա ա էլի (վազում է դուրս և փոտը յեռոց ներս գալիս դարձեալ մի պրակ նամակներով), սաղ օրը դադար չեն տուել, մէկը գնում՝ մէկելն ա գալի, իստակ կատաղել են... էսքանն էլ նոր բերին... նամակով տուն ա շինելու էս տնաքանդը, թէ ինչ ա... (նամակները դնում է սեղանի վերայ). աղիս աչքը լոյս... էսքան գիրը կարթալ կըլնի՞... ընչանք կարթայ՝ կը քօռանայ. (ղանգի յայն) փիւ... ձեռ առան ի՞նձ... (դուրս է գնում և խոկոյն ներս գալիս), էլի՝ նամակ... վերջ չ՝կայ (դնում է սեղանի վերայ), լաւ բան որ ըլնի՝ հօ էսքան չե՞ն բերի... մարդ իմանայ, ինչ են իմացել... իրար խօսք են տուել... (կրկին ղանգի յայն) Աստուած վկայ, գնալու եմ զանգակը տեղից կտրեմ ու դէն շպրտեմ հա՜... գլուխս դանգ արաւ իստակ էլի... էս ինչ մեղացս պատիժն ա (ղանգի յայնը կրկնում է) այ չօր, չօր քեզ ու Աստուծու կրակ, գալիս եմ, գալիս, (դուրս է գնում) հոգիս պըտի հանէք... (ներս է գալիս էլի յեռոց նամակներ բերած) էլ ուրիշ բան հօ չ՝կայ... էլի էս անտէրներից... ես սրանց հախիցը ո՞նց գամ: (դնում է սեղանի վերայ), էնքան պըտի անեն, որ թողնեմ փախչեմ հա... ըսէնց օյին կըլնի՞...

հոգիս (ցոյց տալով կոկորդը) ըստեղս հասցրին էլի անիծածները (ղանգի յայն). Տէր օղորմած Աստուած, դու ինձ համբերութիւն տաս, թէ չէ ես թամամ կը գժուիմ (ղանգի յայնը կրկնում է), այ զնգզնգացնող, մատներդ ջարդուի հա՜, իշալլահ, դէ արի մի գնայ ու զընգացնողին ճիստի տակդ ու խեղդի (ղանգի յայնը երրորդ անգամ լսում է՝ ելնի տրտգ ո՜ ո՜ ծգին) օհօհօհօհօ... շատ ա հերսոտել... եաւա՜շ՝դու իմ հէրսը տես ու քունը ծալի... ես քու հախիցը կը գամ (քարկոտած դուրս է վազում և էլ յեռոց ներս գալիս մի նամակ յեռոտին). դէ հըմի գնա ու խեղդի՝ տեսնեմ ո՞նց ես խեղդում ես հախիցը գալիս... ես ասի ինձ պէս մի այնօրին մարդ կըլներ, կառնէի ու կը պարկէի, ամա ո՞րտեղ, բիրդան որ չ՝տեսայ առաջս ցցուած մի հաստափոր ափիցա՜ր, փուքրս փրսա՜ս, նստեց ու թուքրս էն սհաթը ցամաքեց... (նմայնելով) «էս նամակը կը տաս աղիդ», ասաց չարացած ու առանց եդ մտիկ տալու չքուեց... մարդ իմանայ ընչո՞ւ էր ընէնց խիստ հերսոտել: Լաւ էր ձէն ու ծպտուն չը հանեցի, թէ չէ չռած աչքերից երևում էր, ընէնց պըտի ծեփէր, որ գետնին թխուէի ու էլ վեր չը կենայի... էդ հօ էդ՝ համա ես էլ լաւ բաբաթի դադրեցի... սրանից եդը էլ ոչինչ չեն կարա անի... դուռը պինդ կողպեցի ու եկայ (ղանգի յայնից յանկարծ վեր ընելով) ուֆ, վախեցայ, անիծուիս դու... ամա հըմի ինչքան կուզես ծնկծնկայ ու զնգզնգայ, վալլահ էլ ես դուս եկողը չեմ:

որ մորթէք՝ տեղիցս ժաժ չեմ գալու ... այ, հէնց ինադու ըստեղ պըտի նստեմ ու դուս չըգամ։ (Նապոլեոնի մօտ դրած ատրոնի վրայ)։ Հըմի ինչքան քէփդ տալիս ա՝ զնգացրու։ տեսնեմ ո՞վ ա դուս եկողը (ղանգի յայնը կրկնում է փոքր ինչ ուեելի սասարկի՝ հան ատաղը)։ Ինչ ուզում ես՝ արա։ Ես որ տեղիցս ժաժ եկողը չեմ։ ափիցար չէ՝ թէկուզ պօլկովնիկ էլ ըլէս՝ ես իմ խօսքի տէրն եմ... Համ նիսիա զուլլուզ անեմ։ Համ էլ էսքան չարչարուիմ։ գիժ հօ չեմ։ թէ՝ կարծում ես քո հօր մշակն եմ (ղանգի յայնը ուեելի ուժգին է լսում և երկար)։ սխալ ես հասկացել։ դրանով էլ բան չես կարայ շինի։ հենց ինչքան ուզում ես՝ հերսոտի... թունդ քացախը իր ամանը կը ճաքացնի։ ասել եմ։ դուս եկողը չեմ։ որ մէջտեղիցդ ճաքես ու տրաքուես՝ էլի դուս եկողը չեմ։ քունս տանում ա։ պտի գնամ։ քնեմ։ (ղանգի յայնը ուեելի շատ ուժգին է լսում)։ քու հօրն օղորմի։ վախեցրիր էլի՞... քու զօռն էդ չի՞... չեմ դուս գալի էլի։ զօռով ա՞... (Ռեջիսորի դռանից դէպի դուրս) ես ըստեղ չեմ։ մարդ չըկայ ըստեղ։ Գալուստը քնած ա (լսում է բարկացած Եղիշէի յայնը)։ «Ինչպէս թէ քնած ես, ինչպէս թէ այստեղ չես։ հարբած ես, ինչ է» (դէպի ներս) ադիս ձէնն ա ու թունդ ա հերսոտել։ չէ, քօթակը կերայ... հըմի որ էշը մինչև շլինքը ցխում թաղուեց, անգամներն ա էրևում։ թէ զոչաղ ես՝ արի բռնի ու հանի։ (ղանգի յայնը դադարում է)։ եկայ։ աղա ջան։ եկայ (փոխում է դուրս)։

ՏԵՍԻԼ Բ.

ՆԱ և ԵՂԻՇԷ.

ԵՂԻՇԷ

(Գալուստի ականջից փաղչելով նստում է էստեղ)։ Տօ տափակ գըլուխ, էլ մարդ չէիր գտել հետը մասխարութիւն անելու հէնց ինձ էիր սպասում։ (Յգեյելով ականջները փոփոխակի՝ հետը խան է ածում)։

ԳԱԼՈՒՍՏ

Վա՜յ, հոքուդ մատաղ աղա, վալլահ ես մեղ չունիմ, շունդ ըլեմ աղա։

ԵՂԻՇԷ

(Բաց լինելով ականջը)։ Զէ, մի ասա տեսնեմ, ինձ հետ հանաք անելը քեզ ո՞վ է դաս տուել։ ես քո ընկերն եմ... (ականջները յգելով)։

ԳԱԼՈՒՍՏ

Ախր չես խաբար աղա է (լաց լինելով) աման աղա ջան։ հոքուդ մատաղ, աղա ջան... զահլէս տարան, աղա ջան... ականջս պոկ էկաւ, աղա ջան։

ԵՂԻՇԷ

(Դարձեալ յգելով ականջները) Երկուսն էլ պէտք է պոկեմ, որ այսուհետև զանգի ձայնը լաւ լսես դու, շշմած արարած... ձեռքերս դադրեցին զանգը քաշելով, իսկ սա այստեղ ով գիտէ ինչով է պարապած։

ԳԱԼՈՒՍՏ

Ամա՛ն, ոտքիդ տակը սատկեմ, աղա՛ ջա՛ն, բօլա՛, կաց ասեմ, աղա՛ ջա՛ն, ես չէի գիտա՛, թէ դուն ես աղա՛ ջա՛ն։ Ես հէնց գիտայի, աղա՛ ջա՛ն... Նիսիա՛ էկող ա՛, աղա՛ ջա՛ն։

ԵՂԻՇԷ

(Ականջը ականջով) Ինչ՞ գիտէիր տօ անիծած, ինչ՞ նիսիա՛ եկող, ինչ՞ ես դուրս տալի՛. զանգի ձայնը հօ լսո՞ւմ էիր։

ԳԱԼՈՒՍՏ

Բա՛ չէի լսո՞ւմ...

ԵՂԻՇԷ

Դէ՛ բաց անէիր է՞ (Տօպէնո՛մ է, որ ապրակէ՝ Բայց Գալուստը յեկա՛ է ներսը՛)։

ԳԱԼՈՒՍՏ

Աւիր ո՞նց բացանէի, աղա՛ ջա՛ն, իմ հոգին հանեցին, էնքան որ եկան, գնացին... ես ինչ՞ գիտէի, թէ դուն ես, որ իմանայի՝ էնա՛ բաց կանէի էլի։

ԵՂԻՇԷ

Ինչ՞ եկող գնացողներ, ինչ՞ ես ասում։

ԳԱԼՈՒՍՏ

Տօ ես գիտե՞մ, անջաղ իմ անգաջներն ես պուկ տալի... էլ մաջալ տալիս ին որ... էկողը՝ նամակ... էնքան նամակ բերին, էնքան զնգացրին, որ ոչ զանգումը ձէն մնաց՝ ոչ էլ իմ ոտներումը ղաթ։

ԵՂԻՇԷ

Ուրեմն այսօր նամակնե՞ր են բերել...

ԳԱԼՈՒՍՏ

Մին եքեայ բեռը, հրէն կիտել եմ ստօլի վրայ (Քանելով ականջները՝ կողմը) ո՞ւֆ... քօքահան արաւ տո՞... (զանգի ձայն) ըհը... տես, որ ըղորթ եմ ասում, սաղ օրն էս էր հա իմ հալը, զընգ հա զընգ, զընգ հա զընգ (կողմը) նիսիա՛ չի՝ բաս ինչ՞ ա։

ԵՂԻՇԷ

Տես ո՞վ է...

ԳԱԼՈՒՍՏ

Եանի ինչ՞ տեսնեմ աղա՛... առանց տեսնելու էլ գիտեմ, որ նամակ կըլնի էլի։

ԵՂԻՇԷ

Քեզ ասում եմ գնա՛ տես ո՞վ է։

ԳԱԼՈՒՍՏ

(Դուրս գնալով)։ Գնամ աղա՛, գնամ։ (կողմը) անգաջներս ընէնց ա ժժում, որ կարծես ամեն մրնի մէջ մի մեղրաճանճ ըլնի պպզած (գնո՛մ է)։

ԵՂԻՇԷ

Խեղճ Գալստի պատիժը խիստ եղաւ։ պէտք է խաթրն առնել (Տօպենալով սէլանին և նամակները պեանելով), ո՞ւֆ, ինչ՞ շատ են... այս անգամ անանպատճառ полный сборъ կուներանք... ուղարկածս տոմսակների փողերն են... վերջա-

պէս եղանակը գտանք... (Մտնում է Գալուստը) Հը՞, ո՞վ էր Գալուստ։

ԳԱԼՈՒՍՏ

Ո՞վ կայ, որ ո՞վ ըլնի աղա... իմ ասածն էր... էլի իրեք նամակ բերին, ոտները չի կըտրվում էլի՞...

ԵՂԻՇԷ

Այ, տեսնում ե՞ս, Գալուստ, դու նամակ բերողներից նեղանում ես, իսկ ես ընդհակառակն ուրախանում եմ։ քանի կարող ես՝ շատ բեր այդ նամակներից... դրանցից ամեն մէկն ինձ համար երեք—չորս մանէթ կամ է՛լ աւելի փող արժի, իսկ դու այդ չ՛գիտես։

ԳԱԼՈՒՍՏ

(Կողմը)։ Աստուած տայ ըտենց ըլնի, անջախ հախս կստանամ։ (Ելքն) եանի դրո՞ւստ ես ասում, աղա՞...

ԵՂԻՇԷ

Բոլորովին ուղիղ... հը՞, ականջներիդ հալն ինչպէս է։

ԳԱԼՈՒՍՏ

Զօռ քոքեցիր աղա, ընենց ա տժժում, որ էլ ես խաբար չեմ։

ԵՂԻՇԷ

Ոչինչ, Գալուստ, էդ տժժոցը շուտով էնպէս կը կտրեմ, որ շնորհակալ կը լինիս։ Էս

քանի օրս համ չ՛վճարածս ռոճիկդ կստանաս, համ էլ ամեն մէկ բերածդ նամակի համար հինգ հինգ կոպէկ ընծայ ջէբդ կը դնես։

ԳԱԼՈՒՍՏ

Այ օղորմի քու հօրը աղա, էն վախտը՝ նորից քէֆիդ ուզածի պէս անգաջներս ինչքան ուզում ես՝ էլի քօքիր, թաք ըլի հախս տուր, աղա, կնգանս համար մինթանա պըտի առնեմ։ (Կողմը) վալլահ վախում եմ նիսիա ըլնի, չունքի սրա ամեն բանը նիսիա ա։

ԵՂԻՇԷ

Անպատճառ, անպատճառ, դու այժմ գնա դուրս, փողոցի դրանը կանգնիր, որ էլ զանգի ձէնը ինձ չը խանգարի։ տես նամակներ բերողներ էլի կը լինին. աշխատիր ոչ մէկին ձեռքից չը փախցնես. կրկնում եմ, ամեն մի նամակից հինգ կոպէկ քոնն է։

ԳԱԼՈՒՍՏ

Որ ըտենց ա՝ ջուխտ աչքիս. եանի դրո՞ւստ ես ասում աղա՝ թէ հանաք ես անում։

ԵՂԻՇԷ

Խօսքս խօսք է, Գալուստ։

ԳԱԼՈՒՍՏ

Գլխիս վրայ աղա... համա նիսիա չ՛թողաս։

ԵՂԻՇԷ

Չէ, չէ, մի վախենայ, հախիդ հետ միասին կստանաս. դէ գնա, Գալուստ. շտապիր։

ԳԱԼՈՒՍՏ

Էս ա գնացի աղա, գնացի (գնում է)։

ԵՂԻՇԷ

«Սուտ ասողի տունն, ասում է, կրակ ընկաւ, ոչ ոք չը հաւատաց»։ Ստիպուած այնքան սուտ եմ խօսել, որ խեղճը չի հաւատում, թէ իր վարձը պիտի ստանայ։ (Մօտենալով գրասեղանին). Անցեալ ներկայացումից 150 մանէթ դէֆիցիտ ունեցանք, բայց այս ներկայացումը, յոյս ունիմ, դէֆիցիտն էլ կը ծածկի՝ օգուտ էլ կը տայ։ Ապրի Գալուստը, բաւականին նամակներ է հաւաքել։ Հազիւ հազ հնարը գտայ. փորձը ցոյց տուեց, որ կաստայում տոմսակ չի՛ ծախւում... մեր ժողովուրդը դեռ չի սովորել ինքնաբերաբար տոմսակ գնել ու թատրոն գալ, նրան պէտք է զօռով քաշ տաս թատրոն, թատրոնի փողը նրա գրպանից բռնի կերպով պէտք է հանես, մինչև որ նա վարժուի, մինչև որ նա պահանջ զգայ կամովին թատրոն յաճախելու։ Հէնց այդ պատճառով էլ այս անգամ վերցրի և առանձին ծրարներով տոմսակներ ու ֆիշաներ ցրուեցի քաղաքացոց տները։ Ահա նրանց փողերն է, որ այժմ ստացուել են և երևի դեռ էլի կստացուին։ Այս գեղեցիկ միջոցը

այսուհետև ձեռքից չ'պէտք է թողնել։ «Կարիքը մարդուն հնարագէտ է դարձնում», ասում է առածը։ Տեսնենք այժմ, ո՞վ որքան տոմսակ է վերցրել և ո՞րքան փող ուղարկել (վերցնում է մի-քանի թղթեր և մի ծրար, կողքից կարդում է ու նամակը հանում. երևում է մի ֆիշա ու մեջը մի նամակ և երկու պոռոշակ)։ Սա ի՞նչ կը նշանակի... (նամակը շուռ ու մուռ է տալիս) փող չի երևում... բայց նամակը կարդանք. (կարդում է). «Մեծապատիւ պ. Եղիշէ... ձեր ուղարկած երկու տոմսակը և ֆիշան յետ եմ ուղարկում... միթէ չ'գիտէք, որ ես թատրոնի կաստայի տեղը գիտեմ... Ձեր Սրապիոն Ֆթախտեան»։ Սա մեր թատրոնի յաճախողներից է. երևի նեղացել է, որ տոմսակ եմ ուղարկել... ասենք նեղանալու էլ իրաւունք ունի, առանց ուղարկելու էլ կը գար սա... այո՛, իմ արածը սխալ էր, չը պէտք էր ուղարկել։

ԳԱԼՈՒՍՏ

(Ներս վազելով) Հինգ շահիս եկաւ աղա, հինգ նամակ եմ բերել։

ԵՂԻՇԷ

Շատ լաւ ես արել. տո՛ւր ինձ, (պոռնկում է). իսկ դու էլի տեղդ գնա, մարդ չ'փախցնես։

ԳԱԼՈՒՍՏ

Գիժ հո չեմ, որ մնամ... ամա, աղա ջան, դուն հեսաբը պահի, ես գնացի. (գնում է)։

ԵՂԻՇԷ

Այո՛, ի զո՞ւր ուղարկեցի։ (Վերցնում է երկրորդ նամակը և էլի դրպով կարդում)։ սրա մէջ ափիշա չ՚կայ։ ուրեմն ընդունել է։ (նամակը բանալով պետունում է տոմակները)։ այս ի՞նչ անքաղաքավարութիւն։ (կարդում)։ «պ։ Եղիշէ, շատ ափսոս, որ հիւանդ լինելով չ՚պէտք է կարողանամ թատրոն գալ և ձեր գեղեցիկ խաղը տեսնել։ յետ ընդունեցէք, ուրեմն, ինձ ուղարկած տոմսակը, որ ծախելու ժամանակը չ՚կորչի ։ ։ ։ ամենայն յարգանօք Ձեր Մամբրէ Արշակունի»։ Օրհնա՜ծ ... դու էլ ժամանակ ես գտել հիւանդանալու... բախտ եմ ասել է՞... թէ այսպէս գնա՝ բաներս բուրդ է լինելու... տեսնենք երրորդ նամակն ի՞նչ է ասում։ (բանում է մի ուրիշ նամակ և դեռ չ՚կարդացած՝ ներս է մտնում Գալուստը)։

ԳԱԼՈՒՍՏ

Ասա շէն կենան նամակ բերողներն, աղա։ հէսաբիս վրէն օխտը շահի էլ աւելցրու ... օխտը նամակ էլ բերի։

ԵՂԻՇԷ

Այ զօրանաս դու, Գալուստ, նամակները տուր, ինքդ փախիր դուրս։ (Նամակները պալէս է)։

ԳԱԼՈՒՍՏ

Էլաւ իրեք աբասի, աղա... իմ քէֆը որ քոք ա, քոնը ո՞նց։ (վազում է դուրս)։

ԵՂԻՇԷ

(Բացած նամակը ետում է կարդալ)։ էս ո՞ւմ գիրն է, տեսնես։ («ՊորտքրուՊինեան է նայում)։ հա։ Սարգիս Կուտալօլօզեանն է գրում։ «Պ։ Եղիշէ, շատ անամօթութիւն էի տեսել, բայց ձեր արածը չափիցն անցկացաւ...» ինչպէ՞ս... շատ վայրենին է երևում։ (շարունակում է) «եթէ սոված էք մնացել՝ լաւ է. որ եկեղեցւոյ դրանը գանձանակ բռնէք ու կանգնէք, քան այդպիսի ստոր միջոցների դիմէք...» (ընդհատելով և պայրանալով) ստորը դո՛ւ ես քո օխտը պապի հետ, ցնդուած թշուառական... քեզ ո՞վ է իրաւունք տուել... (շարունակում է)։ «դուք պէտք է գիտենաք, որ ես հայոց թատրոնից վաղուց եմ կշտացել...» (ընդհատելով) իսկ քեզնից ո՞վ է սոված մնացել ... այսուհետև դաս էլ՝ ոտքդ կը կոտրեմ, թշուառական... ես այդ անպատուութիւնը չեմ տանիլ... ես կապացուցանեմ, որ դերասանն էլ իր ամբիցիան ունի, որ նա աւելի՛ պատուազգաց է՝ քան քեզ պէս հազար ու մի կաշառակեր, վաշխառու տղրուկը։ (դէն է շպրտում նամակը)։ մեղքը Պատրիկինն է։ ես քեզ տոմսակ ուղարկողը չէի... ես գիտէի, թէ ի՞նչ հոտած պտուղ ես, ինչ արտի ցորեն ես... սպասի՛ր, ես քեզ հետ իմ հաշիւը փողոցում կը տեսնեմ, քեզ ես կատիպեմ յետ վերցնելու քո անպատկառ խօսքերը, լաւ է գետինը մտնես, կենդանի թաղուես, Եղիշէ, քան թէ թոյլ տաս, որ Կոտալոզները քեզ ձեռք առնեն, հայհոյեն, թքեն երեսիդ

1107-3014
(1400/41391)

այսպէս ստոր կերպով, այդպէս անպատիժ ձեռով... ա՜խ Պատրիկ, բոլոր յանցանքը քոնն է, քո մեղքն է, քո մեղքը...

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՐԱՅՐ ԵՎ ՊԱՏՐԻԿ ՈՒ ՆՈՐԱՅՐ.

ՊԱՏՐԻԿ

Ինչ է պատահել...

ՆՈՐԱՅՐ

Ինչ եղեր է...

ՊԱՏՐԻԿ

Ինչ ես էլի ձէնդ գլուխդ գցել, ուր վրայ ես բարկացել։

ՆՈՐԱՅՐ

Ընդէ՞ր կը պօռաս էֆէնդիմ...

ԵՂԻՇԷ

Լաւ ժամանակ եկաք. ես ձեզ ճրագով էի ման գալիս ու լուսով գտայ. (Քրտնելով Պատրիկի օյնէյից՝ ասում է Էերոմ). բոլորը քո մեղքն է... այո՛, դո՛ւ ես մեղաւորը, դո՛ւ... պատիւս քեզնից կը պահանջեմ։

ՊԱՏՐԻԿ

Ինչ մեղք, ինչ պատիւ, ինչ ես ասում։

ՆՈՐԱՅՐ

Ինչ է ըրածը։

ԵՂԻՇԷ

(Օյնէրը փաղելով). Ես սուլած եմ, հա՜...

ՊԱՏՐԻԿ

(Աչքերը ուղղելով յերդիկը). Ինչ հարցմունք է դա։

ՆՈՐԱՅՐ

(Հեգնելով նրանց). Ինչ ըսել կուզես էֆէնդի։

ԵՂԻՇԷ

(Բայց չընդունելով օյնէրը՝ Նորայրին). Իմ անամօթութիւնը երբ ես տեսել, Նորայր... ասա՛, երբ ես տեսել, ես անամօթ եմ։

ՆՈՐԱՅՐ

Քա՜ւ լիցի էֆէնդիմ, ամօթխածներուն մէջ մատով ցցնելու մէկն ես։

ԵՂԻՇԷ

(Պատրիկի օյնէրը փաղելով). Հապա ինչ անպատուութիւն է այս և որ մեղքիս համար... ինչ է ուզում սա ինձնից։

ՆՈՐԱՑՐ

Ո՞վ կըսէ, թէ անամօթ ես, դուն, Պատրիկ, մեղք, մեղք շրթունքներուդ... չե՞ս ամչնար։

ՊԱՏՐԻԿ

(Ո՜ղո՜ր է օյնէն պլաթել, քայց Եղիշէն չի ընդնո՜ր). Եղբայր, ո՞վ է ինչ ասել... և ինչո՞ւ պիտի ասեմ...

ԵՂԻՇԷ

Ես եկեղեցւոյ դրանը կանգնող աղքատներիցն եմ, հա՜, Պատրիկ, ինչ յանցանք եմ գործել քո առաջ, որ էս ցաւի մէջ գցեցիր ինձ։

ՊԱՏՐԻԿ

Ախր ինչ է եղել, մի սա տեսնենք է՞...

ԵՂԻՇԷ

(Օյնէ՛ը ընդնելով) Ես քեզ չասացի՞ կուտպօլոզեանից ձեռք վերցրո՞ւ...

ՊԱՏՐԻԿ

Այո՛, ասացիր...

ԵՂԻՇԷ

Քանի՞ անգամ կրկնեցի, թէ նրան տոմնակ ուղարկելը չարժէ։

ՆՈՐԱՑՐ

Ըսածդ է, այո՛, կը հաւաստեմ, կը վկայեմ, ես ալ լսած եմ։

ՊԱՐՐԻԿ

Այո՛, ասացիր, է՝ ինչ է եղել որ...

ԵՂԻՇԷ

Չե՞մ ասել, թէ նա անպիտան և անպատիւ մարդ է։

ՊԱՏՐԻԿ

Ասել ես, ասել, իսկ թէ այժմ ինչ ես ուզում ասել՝ դու այն ասա։

ՆՈՐԱՑՐ

Իրաւ, էֆէնդիմ, ըսելիքդ ինչ է... չըսե՞ս մի նայինք։

ԵՂԻՇԷ

Քանի՞ անգամ կրկնեցի՝ թէ նորա համար հայոց թատրոնը մի և նոյն է թէ՝ ջհուդի հարսանիք։

ՆՈՐԱՑՐ

Կուտպօլոզներուն համար ջֆտի հարսնիքէն ալ գէշ ըլալու է էֆէնդիմ։ սակայն գիտես աղպար, 'ի Պոլիս որու կըսէն կուտպօլոզ... հոն, կուտպօլոզ ըսածդ խելքէ թեթև, շաշխըն ըսել է... ազգանունէն կը ճանչցուի ինչ մարդ ըլլալը, սրդողելու հարկ չի կայ ընաւին։

ՊԱՏՐԻԿ

Բայց ես էլի չեմ հասկանում, թէ դու ինչու ես տաք տաք խօսում և կամ ինչո՞ւ ես բարկանում։

ԵՂԻՇԷ

Ինչպէս չ'բարկանաս եղբայր, երբ որ տեսնում ես թէ՝ մի որևիցէ կուտպօլօզ, որ քո ոտքի հողը չարժէ... որ, որ, որ... Տէր քեզ մեղայ, բերանս ինչ է գալի ու գնում... բայց բոլոր յանցանքը քոնն է, Պատրիկ, կրկնում եմ, դու որ չ'ստիպէիր՝ ես նորան տոմսակ ուղարկողը չէի։

ՊԱՏՐԻԿ

Որ ուղարկել տուի՝ ինչդ պակսեց։

ԵՂԻՇԷ

Որ ոչինչս չ'պակսեց՝ դէ առ կարդա։ (Նամակը պալիս է, Նորայրը մօտենում է)։ Կարդա՛, որ գովածդ մարդուն լաւ ճանաչես ու միւս անգամ իմ գործի մէջ չ'խառնուես։ (Պատրիկը լռում կարդում է, իսկ Նորայրը հեռանում է նորան՝ նոյնպէս մտքի մէջ կարդալով)։

ՊԱՏՐԻԿ

(Աւարտելուց յետոյ՝ վեր նայելով)։ Հա՜... սպասիր ուրեմն... աւազակ... ես քեզ կուտպօլօզ խրատ կը տամ, էնքան քիթ ու պռունկդ դըրըստեմ, որ կուտտափակ դառնաս, անամօթը կտեսնենք, թէ ով է։

ՆՈՐԱՅՐ

(Գլուխը նոնուելով)։ Իրաւ որ սանձարձակ քեօփէկին մէկն եղած է ... իրաւցնէ անհանդուրժելի խօսքեր ... կարթցաը մի ... անօթի,

աղքատ կանուանէ թշուառականը զվաստակաւոր դերասանն ... արդարև պղերգ և անգոսնելի անլուր ոճիր ու արարք, ով ըլլալու է սա կուտպօլօզ շաշխըն հէրիֆը։ (կողմը) հերսէս չ' ճաթիմ... Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո ...

ՊԱՏՐԻԿ

Դու էլ գրաբար մի կոտրտի, թէ Աստուածդրդ կը սիրես, ես ինչ գիտեմ ով է ... այժմ երևում է, որ անպիտանի մէկն է։

ԵՂԻՇԷ

Անպիտանը հերիք չէ, շատ քիչ է։

ՆՈՐԱՅՐ

Պատուոյ և ընկերսիրութեան զգացումն մեզմէ կը պահանջէ պատժել անշուշտ լպիրշ և անօրինակ անամօթն։ 'Ի խաչ, 'ի խաչ հանելու է զանզգամն կուտպօլոզ. ատրճանակի շեշտակի հարուածով մը շուկային օրթա տեղը վար ձգելու է զթարաս օղլին թարաս, ապա թէ ոչ ... (կողմը) ճաթիլս մնատեցաւ... եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի... զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր...

ԵՂԻՇԷ

Բոլորովին համաձայն եմ, բայց մտածում եմ, որ նա այդ պատուին չ'արժէ։

ՊԱՏՐԻԿ

Անշուշտ, ես էլ եմ համոզուում... երբէք պէտք չէ նշանակութիւն տալ։

ՆՈՐԱՅՐ

Զեմ ընդուներ, կը բողոքեմ... 'ի Պօլիս, էֆէնդիմա սոյլէիմ, նմանօրինակ պարագայից մէջ հայը չի վախնար խստիւ զինուիլ տաճկի դէմ իսկ, սակայն հոս մէջ չը պիտի՞ կրնանք հայու դէմ զինուիլ, ի՞նչ կըսէք, վախնալու ի՞նչ կայ, ի՞նչ փոքրոգութիւն է այս, չեմ հասկընար... այդ սրբազան պարտիք զիս թողէք. ես կուտպօլօզին ապուրը կեփիմ։

ՊԱՏՐԻԿ

(Կողմը). Էս բլբլան լեզուն որ չը լինի՝ ագռաւները սրա աչքերը սաղ սաղ կը հանեն։

ՆՈՐԱՅՐ

Ի՞նչ կը թօնթօրաս մէկուսի, Պատրիկ էֆէնդի։

ՊԱՏՐԻԿ

Ասում եմ, որ ձեռքիցդ ոչինչ չի գայ։ Բոլորդ էլ էդպէս էք, մի սանրի կտաւ, պարծենկոտ՝ վերին աստիճանի։

ՆՈՐԱՅՐ

Որո՞ւ կըսիս, ինծի՞... չի՞ մեղանչեր Եղիշէ էֆէնդի։

ԵՂԻՇԷ

Երբէք. ո՞ւմ յայտնի չէ, որ մի բան պատահելիս՝ մկան ծակը հարիւր թումանով կառնես։

ՆՈՐԱՅՐ

Զարաչար կը սխալիք, բարեկամք, ընդէ՞ր կամբաստանէք զիս։

ԵՂԻՇԷ

Ի՞նչ ամբաստանութիւն, երբ որ ճիշտ է։

ՊԱՏՐԻԿ

Անցեալ օրը չէ՞ր, որ կրկնութեան ժամանակ առաստաղի մկների ձայնից էնպէս վեր թռար, որ քիչ մնաց խելքդ թռցնէի՞ր։

ՆՈՐԱՅՐ

Այդ ուրիշ խօսք, էֆէնդիմ։ մուկ ըսածդ չորքոտանի կենդանի է և իմիս ախորժակին չի գար։

ՊԱՏՐԻԿ

Ինչպէս, ինչպէս... ի՞նչ ասացիր...

ԵՂԻՇԷ

Ուզում է ասել՝ համը չի սիրում էլի։

ՆՈՐԱՅՐ

Ախ, հազար ներողութիւն, սխալեցայ. ըսել կուզեմ, մուկէն չեմ ախորժիր... չեմ ախորժիր նաև ձեզ հետ սոյն օրինակ բանակռիւ վարելէն... դուք մարդը մուկէն տարբերելու

ընդունակութիւններդ կորուցած կերևիք... մէկը զզուելի կենդանի է, իսկ մէկալը բանական արարած։

ԵՂԻՇԷ

Կուտպօլօզ բանական արարածը մի՞թէ աւելի զզուելի չէ, էֆէնդի։

ՊԱՏՐԻԿ

Եւ աւելի կեղտոտ։

ՆՈՐԱՅՐ

Ապրի՛ք· ըսածներդ կը հաւնիմ... ոչ միայն զզուելի, այլ և գարշելի, խոտելի, անգոսնելի, եպերելի, գանելի, այպանելի, զազրելի, սակայն թողունք այս անօգուտ վիճաբանութիւնն։

ՊԱՏՐԻԿ

Այո՛, թողնենք, թէ չէ դու ամբողջ հայկազեան բառարանը գլխից մինչև վերջը բերան կասես։ Երանի՜ քեզ, էդքանը ո՞նց ես թուքակի պէս մտքումդ պահում։

ՆՈՐԱՅՐ

Խօսքդ ճանչէ· թուքակին խոշորը հօրդ տեսնէիր, (կողմը)· կերած մեղրին աշէ· (իրան) զէվզէկ հէրիֆ։

ՊԱՏՐԻԿ

(Ծիծաղում է)· Հա՛, հա՛, հա՛· (կողմը)· սրա խրտնելուց իմ քէֆս գալիս է։

ԵՂԻՇԷ

Հը՜, ինչ՞ էլի իրար դէմ զինուեցիք· կարճ կարէք տեսնենք, թէ ստացածս միւս նամակները ինչ՞ բովանդակութիւն ունին։ Օգնեցէք ինձ, ամեն մէկդ էլ մի մի նամակ բաց արէք, որ շուտով պրծնենք· նամակները շատ են։ (Ի-ՐՈՓՈՆԼԻ-ՐԸ ՈՒՆՈՒՄ Է ՄԻ ՆԱՄԱԿ, ԲԱՆՈՒՄ ԵՒ ԵՐԵՔՆ ԷԼ ՄԻՈՅԱՄԱՆԱԿ ԱԿՈՒՄ ԵՆ ԿԱՐԴԱԼ)։

Եղիշէի կարդացածը·

«Պ· դերասան Եղիշէ, շնորհակալ եմ, որ «ինձ տոմսակ էք ուղարկել, բայց փող չունիմ, «եթէ նիսիա կը տաք, ուրախութեամբ կը գամ «թատրոն, իսկ թէ ոչ՝ յետ եմ ուղարկում տոմ-«սակը։ Ձեր խոնարհ ծառայ Սեղբեստրոս Կու-«զիկեանց»։

Պատրիկի կարդացածը·

«Մեծ· պ· Եղիշէ, ձեր թատրոնի օրը հարսա-«նիքի հրաւիրուած լինելով՝ ներողութիւն եմ խն-«դրում, որ չ՝պէտք է կարողանամ ներկայ լինել «թատրոնում։ Ափսոսում եմ շատ և յետեմ ուղար-«կում տոմսակը։ Մնամ ձեր Կիրակոս Սևաչեան»

Նորայրի կարդացածը·

«Ցարգելի պ· Եղիշէ, եթէ ձեր թատրոնի «օրը ցիրկի տոմսակ վերցրած չը լինէի՝ անպատ-«ճառ ձեր ուղարկած տոմսակները կը պահէի։

«Ներեցէք, որ այս անգամ էսպէս պատահեց։
«Ձեր Ղամբէոս Ծառուկեանց»։

(Կարդալը դադարեցնելու յետոյ՝ երբ երես են նայում)։

ԵՂԻՇԷ

Ինչ էք ասում... խելքս բան չի կտրում։

ՊԱՏՐԻԿ

Փիս հոտ է գալիս մեր թատրոնից։

ՆՈՐԱՅՐ

Յառաջ բերած պատճառնին բնաւ չեմ ընդունիր։

ՊԱՏՐԻԿ

Դու որ չընդունեցիր՝ պրծաւ նրանք իրանց հացը կերան։

ԵՂԻՇԷ

Մի մի նամակ էլ վերցրէք տեսնենք, բայց առանձին առանձին կարդանք, որ բան հասկանանք, թէ չէ շիլափլաւ է դուրս գալիս։ (Վերցնում բանում են և «կում են հերթով կարդալ)։

ՊԱՏՐԻԿ

Ես իմն կարդում եմ, լսեցէք։ (կարդում է)։ «Պ. Եղիշէ՝ անճարացած ընդունեցի ուղարկածդ երկու մանէթանոց տոմսակը, փողը չուղարկեցի, այլ դուրս եկայ քո պարտքից։ Ցոյս ունիմ, որ այս թատրոնի եկամուտից կուղարկես քո նիսիա խմած գարեջրի մնացած 18 մանէթը։ Քո Պետրոս Շիմշիրեանց»։

ԵՂԻՇԷ

(Կողմը) Այ գետինը մտնես դու հա... (Նորայրն ու Պատրիկը նայում են Եղիշէին հէգնօրէն)։

ՊԱՏՐԻԿ

Նիսիա կոնծելու լաւ տեղ ես գտել բարեկամ։ սրանից յետոյ ես էլ Շիմշիրեանցի մուշտարին եմ դառնալու։ կարգին մարդ է երևում։

ՆՈՐԱՅՐ

Ասլ հայ քրիստոնեայ։ (Եղիշէին)։ էֆէնդի, աղէկ գարեջուր է՞, չէ նէ գէշ։ աղէկ է նէ՝ ես ալ ամենայն սիրով ու յօժարութեամբ անոր յաճախորդը կլլամ։ ծանօթացուր մէյմը։

ԵՂԻՇԷ

Ինձնից շատ խէր դուրս տարաւ՝ մնացիք դուք։

ՊԱՏՐԻԿ

Դու էլ հաւատացիր... ինձ համար նիսիա բան առնելուց կամ ուտել խմելուց զզուելի բան չ'կայ։ Զեմ հասկանում, ինչպէս չէք ամաչում, երեսներդ ինչպէս է բռնում։

ՆՈՐԱՅՐ

Ես ալ քեզի պէս, Պատրիկ էֆէնդի, թէև ըսի, սակայն շախա կընեմ։ Որո՞ւ երես չամչնար, չի՞ շիկնիր... պզտիկ ատենս, ինչուան տասուիրեք տարեկան ըլլալս, քոյր չունենալուս պատճառաւ, ծնողքս զիս աղջկայ հանդերձ հագ-

ցուցած են. ան օրէն ինչուան հիմա աղջկայ ամօթխածութեամբ կը պարծիմ... ատենօք ինծի Նուրիկ տուտու ալ կըսէին... տուտու ըսելը աղջիկ ըսել է, հասկցա՞ր։

ՊԱՏՐԻԿ

Հասկացայ, հասկացայ, կարճ կտրիր, տեսնենք Եղիշէի բացած նամակն ի՞նչ է ասում։ (Եղիշէին). կարդա տեսնենք, թէ չէ սրան որ թողնենս՝ ճէի պոչը շատ կը երկարացնի։

ԵՂԻՇԷ

Լսեցէ՛ք, կարդում եմ։ (կարդում է)։ «Ինձ ուղարկած երեք բուբլիանոց տոմսակի փողը խնդրում եմ ստանալ պ. Նորայրից։ Այդ պարոնը, որ սկզբներում շատ էր կոտրտւում ու իրան աղնիւ ձևացնում, (Նորայրը շփոթուում է և դէպ կողմն է նայում)։ մի տարի աւելի է մեր դուքանին շապիկների և սապոնի փող է պարտ՝ չի վճարում։ Ինչքան էլ երեսը վեր եմ արել ու մազերը խուզել՝ կոպէկ չեմ ստացել և չեմ էլ ուզում, իրան փեշքաշ. պարիկմախէր Թէոս Մազմանեանց»։ (Եղիշէն ու Պապրիկը հէգնօրէն նայում են Նորայրին, որ երեսը շուռ է տալիս)։

ՆՈՐԱՅՐ

(կողմը). Սուտ կը խօսի, ադ ես չեմ։ ուրիշ Նորայր ըլլալու է։

ԵՂԻՇԷ

Էս մեր ամաչկոտ Նուրիկ էֆէնդին, ախ,

ներեցէք, Նուրիկ տուտուն, դուրս է գալիս, որ թէ երեսն է նիսիա վերանել տուել, թէ մազերը նիսիա խուզել տուել և թէ խեղճի սապոնի և շապիկների փողը վասն ի վերուստ արել և դեռ համարձակւում է...

ՆՈՐԱՅՐ

Արևս վկայ սուտ կը խօսի, հիչ միտքս չի գար։

ՊԱՏՐԻԿ

Լաւ, լաւ, քեզ էլ ճանաչեցինք «ստի ոտնեը կարճ կը լինի»։ հիմա հասկանում եմ, թէ պստիկ ժամանակդ ինչքան ամաչկոտ և սիրուն աղջիկ եղած կը լինիս քու խիարի քթով ու գանձանակի թապաղի չափ մեծ ականջներով։

ՆՈՐԱՅՐ

Կորսուէ անդին բոշպողազ թշուառական։

ՊԱՏՐԻԿ

Դէ լաւ, լաւ, մի նեղանայ... շուտ կը ծերանաս։

ԵՂԻՇԷ

(Նորայրին). Հէրթը քոնն է. նամակդ կարդա՝ տեսնենք։

ՊԱՏՐԻԿ

(կողմը). Երկուսի շուռն էլ դուրս տուեց. Աստուծով ես լաւ պրծայ։

ՆՈՐԱՑՐ

Ա.Հաւասիկ կընթեռնում, ուշադրութիւն դարձուցէք։ (կարդում է)։ «Գերամեծար Եղիշէ աղա Ջան, թէ մերս կողմանէ և հալն հարցանէք՝ փառք Աստուծոյ, ողջ եմք և ձեզ առողջ լինել ցանկամ, ամէն։ Դարձեալ, աղա Ջան, իմացած կենաս, թատրոնի բիլէթներն ըստացամ, ամա ներողութիւն կանես, չունքի փողն չուղարկամ։ խնդիրս է՝ ստանաս քեռ եօլդաշ Պատրիկ աղայիցն (Պարոնիկը շփոթում է)։ խնդիրս առ. թամամ չորս ամիս ա, ձեռացափող 28 մանէթ եմ տուած՝ առնելն չեմ կարում։ Հրամանոցդ ծառայ Թաթոս Մաթոսով գրեցի»։ (Եղիշէն ունորայրը հեգնորէն նայում է Պարոնիկին, որը երեսը շուռ է տալիս)։

ՊԱՏՐԻԿ

(կողմը)։ Ասա քեզ ո՞վ էր ասում էդ խախաչագողին տոմսակ ուղարկես։

ԵՂԻՇԷ

Հը՜, դարմանի տակի ջո՜ւր, դու երկսիցս էլ խալֆա դուրս եկար, ասա տեսնեմ, այդ Սաւրիգեղցի գանձապահիդ ո՞րտեղից ես գտել։ չես ծախի առնենք...

ՆՈՐԱՑՐ

(Եղիշէին)։ Այդ հրաշալի անսպառ գանձը ծախել կըլլայ մի... (Պարոնիկին)։ փէքէր, վարպետ էֆէնդիմ... ըշտը հասկցանք, թէ քուկիտ երեսին կաշին շատ ամուր տեսակէն եղած է, հիչ մաշելիք չունի եղեր։ աֆֆէրիմ, Պատրիկ, աղէկ վարպետորդի եղած ըլլալդ գիտցանք։

ՊԱՏՐԻԿ

Իսկի ձէն մի հանէք, որ երեքս էլ մի պտուղ չենք։

ՆՈՐԱՑՐ

Հայ դերասանի վիճակնէ էֆէնդիք... վեհանձնութեամբ համբերելու է... կը հաւատամ, թէ օր մը մեզի ալ ազգը երախտահատոյց կըլլայ։

ԵՂԻՇԷ

Այո։ »Օլմա էշշայրմ, օլմա, եազ գեալը՝ եօնջա բիթար»։ «մինչև առուն ջուր գայ՝ գորտի աչքերը դուս կը գայ»։

ՊԱՏՐԻԿ

Էդ բոլորը՝ լաւ, բայց աֆիշանները կըպցրած են։ վաղը չէ միւս օրը ներկայացումն է։ ծախուած տոմսակներ էլ որ Աստուած տայ... դուք էս ցաւը լացէք։

ՆՈՐԱՑՐ

Ինչ ընելու է՝ կանգիտանամ... սակայն կը թողուս, Եղիշէ էֆէնդի, մնացորդ նամակնին բանալու...

ԵՂԻՇԷ

Բանալ կարող ես, բայց հազիւ թէ մի բան լինի։

ՊԱՏՐԻԿ

Էլ ճար չ՚կայ, թող նա բաց անի, բայց դու էլի պէտք է սուտ հիւանդանաս Եղիշէ։ (Նոյայը ակոռոմ է Ֆոյոյի նամակները բանալ և մէջները ալինչ չ՚գտնելով՝ գլուխը ներսուել ու դէռ ու դէն շպրտել)։

ԵՂԻՇԷ

Այո՛։ анонсъ-ի կարիք կայ։

ՆՈՐԱՅՐ

(Մի Ֆոյոյի նամակ դէն շպրտելով)։ Անօնս-ով սակայն յագենալ չէ կարելի, էֆէնդիք... փանթալօնս ճռռթած է, մերկ շրջիլ կամաչեմ։

ՊԱՏՐԻԿ

Ը՞հ, խելքի աղքատ, դու իւրկի սովոր ես Նուրիկ տուտու, մի քանի օր իւրկայ կը հագնես՝ բրիւկդ չի երևայ։ իմ գարդից խաբար առ որ հատ կոպէկ չունիմ... Ատուած ողորմած է, դարդ մի անի... դերասանը անհոգ թռչունի պէս պիտի ապրի, ոչ ցանի՝ ոչ հնձի... (Եղիշէին) դու анонсъ-ը թելադրիր, ես գրեմ։ (Նոյոռոմ է գրասեղանի մօտ, գրիչն ու ներսուին ուռնռոմ)։

ԵՂԻՇԷ

Գրիր։ (Ընկերներոմ է)։ «Առաջնակարգ դերասան պարոն Եղիշէի անակնկալ և անյոյս հիւանդութեան պատճառով... (Նոյայը մի պոռաֆ նամակ շպրտոմ և կպցնոմ Պոպրեկի գլուխն, որ վայր է ընկնոմ յերուէց, իսկ Պոպրեկին վերնոցնոմ փէղկց)։

ՊԱՏՐԻԿ

Կամաց, տո ծալպակաս։ (Նոյելով)։ «անյոյս» խօսքն աւելորդ է։

ՆՈՐԱՅՐ

Ներէ, կաղաչեմ, կը սրդողիմ, որ և ոչ միոյն մէջ փարա կը գտնիմ...

ԵՂԻՇԷ

(Պոպրեկին)։ Դու դեռ խօխա ես, քեզ ինչ որ ասում են, գրիր։ «անյոյս»-ը նրա համար է, որ եթէ դարձեալ տոմսակ չ՚ծախուի՝ էլի կարողանանք յետաձգել։

ՆՈՐԱՅՐ

(Նամակները բանալը պրծնելոց յետոյ)։ Կը հաւնիմ Եղիշէ էֆէնդիս ըսածին... խելաց շտեմարան է, անհուն ծով... սակայն իր նամակներու մէջ ալ անհուն դատարկութիւն...

ՊԱՏՐԻԿ

Թող, մի խառնուի... իրաւունք ունիս, Եղիշէ... ուրեմն (գրածը կարդոմ է)։ «Առաջնակարգ դերասան պ. Եղիշէի անակնկալ և անյոյս հիւանդութեան պատճառով...»

ԵՂԻՇԷ

(Շարունակելով)։ Այո՛, «եւ անյոյս հիւանդութեան պատճառով՝ ամսոյս 9-ի ներկայացումը յետաձգւում է ամսոյս 15-ին»։

ՊԱՏՐԻԿ

Գրեցի՝ էլ ուրիշ։

ԵՂԻՇԷ

Էլ ուրիշ ոչինչ։

ՆՈՐԱՑՐ

Ադ աղէկ՝ սակայն փանթալօնիս խնդիրը մնաց՝ փարա չենս տար ինձի, Եղիշէ էֆէնդի՝ քաղիկ մը չունիմ... ադկէ զատ ուտելու պէտք ալ կզգամ չարաչար։

ՊԱՏՐԻԿ

(Ա՛ռանձին՝ Եղիշէին)՝ Արի սրան մի քիչ ձեռք առնենք՝ (Նրան)՝ Զը լինի՞ կարծում ես, էֆէնդի, թէ մենք ոչ ատամ ունինք և ոչ փոր։

ԵՂԻՇԷ

Հանաքը դէնը, Նորայր, ես ո՞րտեղի էֆէնդին եմ, որ ամեն խօսքից յետոյ պոչիցս կպցնում ես՝ էֆէնդի որ լինէի՝ դերասանութիւն ինչի՞ էի անում։

ՊԱՏՐԻԿ

Որ իմանայ քեզնից փող դուրս կը գայ՝ շուտով քեզ փաշա էլ կը շինի... սա էստեղ է միայն քեզ էֆէնդի ասում՝ բայց դուրսը՝ որ իմանաս քո յետևից ինչե՞ր է խօսում... վայ նրա մեղքը՝ ով սրան չի ճանաչում... վերջապէս ներսը քահանայ՝ դուրսը սատանայ... հայ դու կեղծաւորների թագաւոր էֆէնդի։

ՆՈՐԱՑՐ

Խօսքդ ճանչէ, ղէվզէկ՝ ինչ դուրս կուտաս խելքէդ ի վեր՝ ապաշնորհ խեղկատակ։

ՊԱՏՐԻԿ

(Կողմը)՝ Փալանը շուռ տուեց՝ (Իրան)՝ էդ չելաւ՝ «խեղկատակ» խօսքից յետոյ որ «էֆէնդի» էլ չաւելացնես՝ ես կը նեղանամ։ Եղիշէ էֆէնդիից ինչով եմ պակաս՝ նա երեք քիթ ունի ես մի՞ք... հա, հա, հա...

ՆՈՐԱՑՐ

Ծաղրածու Միմոսէն ու Մորոսէն երբէք չես տարբերիր ու՝ շաշխըն հէրիֆ։

ՊԱՏՐԻԿ

Միմոսն ու Մորոսը ո՞րն է տա՞։

ՆՈՐԱՑՐ

Ըշտէ դու ես՝ աւետարան կը կարդաս՝ որ գիտնաս։

ԵՂԻՇԷ

Վերջացրէք՝ բաւական է՝ ինչքան իրար եախից ձաւար հաւաքեցիք... մեր ընդհանուրիս ցաւի վերայ մտածէք՝ (Նորայրին)՝ անհոգ եղէք՝ փանթալօնիդ փողը՝ ինչպէս լինի՝ կը հոգանք՝ նիսիա էլ լինի՝ կառնենք՝ բայց առայժմ այս ԱՅՈՅՏ-ը տպարան հասցրէք՝ որ տպագրեն և շուտով կարողանանք պատերին կպցնենք։

ՊԱՏՐԻԿ

Էս բոպէիս տանեմ։

ԳԱԼՈՒՍՏ

(Նէրո վոլէլով)։ Առ քեզ 15 նամակ էլ աղա ու մէկ մանէթ օխտը շահիս ցնծա։

ԵՂԻՇԷ

Գլխովդ դիպչի քո բերած փուչ նամակները, հաւաքի տար կրակն ածա, բոլորը քեզ փեշքաշ...

ԳԱԼՈՒՍՏ

(Թաղած նամակները պեռնելով՝ կողմը)։ Էս ինչ ա տե՞ս... Բաս իմ հախն ու փողը, աղա...

ԵՂԻՇԷ

Քաշուի կորի բանիդ, մենք շատ մեղրոտեցինք՝ մնացիր դուն։ (Գալուստը պեղէց ղէ ղուրթուս)։

ՆՈՐԱՑՐ

Կորսուէ սըկէ, շաշիրն հէրիֆ, փանթալոնիս փարա չը կայ՝ աս կայնէր հախ կուզէ։ (Էլէ ղէ՛ ղուրթուս)։

ՊԱՏՐԻԿ

Շուտ շնորհքդ պակսեցրու, ապուշ, ինչ ես մեխուել ու կանգնել։ (Դուրս թռաւ Գալուստը ղէ ղուրթուս)։

ԳԱԼՈՒՍՏ

(Կողմը)։ Սրանք ինչ հօրս ցաւն են։ (Նրանց) Ձեզ ինչ, ես իմ հախն եմ ուզում։

ԵՂԻՇԷ

Դուրս կորիր, ասում եմ, թէ չէ հախդ պնչերիցդ կը հանեմ։

ԳԱԼՈՒՍՏ

(Կողմը)։ Էլի անգաջներս քօքելու միտք ունի հա։ (Եղիշէին)։ Էս էլ նիսիա մնաց, աղա... որ ըտենց ա՝ էլ ես ղուլլուղ անողը չեմ, գնում եմ պօլիցէն գանգատ... «Նիսիա՝ գիրմանզ քիսիայ»։ (Գնում է — պեռուրն)։

ՎԱՐԱԳՈՅՐ։

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Երես.	Տող.	Տպուած է-	Կարդալ.
9	18	ակաճջս	անգաջս
24	8	մէք	մեք
„	12	կեփիմ	կեփեմ
„	24	կըսիս	կըսես
29	12	կլլամ	կըլլամ
32	3	Եեղիշէ	Եղիշէ
„	14	հէգնորէն	հեգնօրէն

ԼՈՒՍԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ԱՍՏՎԱՐՏ. ԳՐԱՊԱՐԱՆ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ

«Ազգային գրադարան»
NL0372243